

**ԱԶԱՏ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԵԶԱՎԱԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒՄԸ
(ըստ Ջ. Ջոյսի «Դուբլինցիները» պատմվածաշարի)**

Յուրաքանչյուր լեզվում, թե՛ բազային, թե՛ հեղինակային, առկա են բազմաթիվ ազատ (ԱԿ) և կայուն կապակցություններ (ԿԿ), որոնք կարող են ուսումնասիրվել թե՛ ձևաբանաշարահյուսական, թե՛ լեզվաոճական-լեզվաբանաստեղծական առումներով:

Առաջին դեպքում բննարկվում է բառիմաստը՝ բառային նշանի (բառի) բովանդակային կողմը (նշանակելին) և բառային նշանի քերականական արժեքը, այսինքն՝ բառի ձևաբանական ու շարահյուսական հատկանիշները կամ դրսևորումները:

Ինչպես նշում են կառուցվածքային լեզվաբանության հետազոտական մեթոդների կողմնակից լեզվաբանները՝ «...բառայինը և քերականականը պատճառահետևանքային հարաբերությամբ սերտորեն կապված են միմյանց...» (Խաչատրյան Լ.Մ., 1996:5): Սեկ այլ տարբերակով ասած՝ բառը (բառույթը), որպես ձևաբանական և շարահյուսական մակարդակների դրսևորում՝ կարող է հանդես գալ միասնաբար. այս պարագայում լեզվական միավորը (բառ, բառակապակցություն, արտահայտություն և այլն)՝ կապված շարահյուսական գործունի փոփոխության հետ, կարող է օժտվել բառային-քերականական մի նոր իմաստավորմամբ (բազմիմաստություն) և ստանձնել դարձվածակազմիչ դեր: Ահա այս «դարձվածակազմիչ» նշանակությամբ էլ ԿԿ-ները տարբերվում են ԱԿ-ներից, ինչպես օրինակ, «հետաքրքիր մարդ», «սառը լողանք», «վիճակն անհույս էր» ազատ կապակցություններն են տարբերվում «իդ օրերը հաշված են», «Աստված հոգին լուսավորի», «թոկից փախածի մեկն էի» (բոլորն էլ՝ Ջ. Ջոյսի «Դուբլինցիներ»-ի «Քույրերը» պատմվածքի հայերեն թարգմանությունից) ԿԿ-ներից, որոնք ոչ միայն կայուն են, այլև ունեն փոխաբերական նշանակություն. հանգամանք, որը բնորոշ է դարձվածքներին:¹ Առաջին տիպի կապակցությունները կոչվում են ազատ (ԱԿ) նրա համար, որ կարող են ազատորեն փոփոխվել՝ կախված տվյալ հեղինակի մտադրությունից և տվյալ երկի (ստեղծագործության) համատեքստից:

Այսպես, հեղինակը կարող է գործածել «ուշագրավ մարդ», «վիճակն օրհասական էր», «շատ սառը լողանք» բառակապակցական հոմանիշները, բայց չի կարող փոփոխել, ասենք, «թոկից փախած» կապակցությունը, քանի որ վերջինս հատուկ դարձվածք է (իդիոմ), այսինքն՝ լեզվական միավոր, որը և՛ կայուն է, և՛ փոխաբերականությամբ օժտված. ուստի, յուրաքանչյուր փոփոխություն, որ հնարավոր է փորձարկել այս դարձվածքի նկատմամբ, ինքնըստինքյան

կհանգեցնի դարձվածքին բնորոշ յուրօրինակ իմաստի և առհասարակ՝ տվյալ դարձվածքային արտահայտության չեզոքացմանը կամ «անհետացմանը»:

Գետևաբար, նշյալ դարձվածային միավորը ազատ չէ, այլ կայուն է: Եվ այս կայունությամբ է պայմանավորված նրան հատուկ այլաբանական (փոխաբերական կամ փոխանվանական), կարելի է ասել՝ բացառիկ իմաստը:

Եվ եթե ՍԿ-ներում բառերը դրսևորվում են իրենց ուղղակի-անվանողական նշանակություններով, ապա ԿԿ-ներում՝ այլաբանական, նույնն է թե՝ դարձվածային (իդիոմատիկ) իմաստներով: Թեև նշվում է, որ դարձվածային լեզվական միավորները կայուն են, բայց երբեմն կարող են փոփոխվել նաև դրանց (բառերի) խոսքիմասային նշանակությունները:

Կարող են տեղի ունենալ խոսքիմասային փոխանցումներ: Ն.Բ.Գվիշյանին, օրինակ, նկատի ունենալով բառերի ներունակությունը՝ շարահյուսական տարբեր կառույցներում հանդես գալու իբրև տարբեր խոսքի մասեր (խոսքիմասային տարարժեքություն), մասնավորապես նկատում է, որ անգլերենի *ed* և *in* գ մասնիկներով բառերը ՍԿ-ներում հանդես են գալիս բայական, իսկ ԿԿ-ներում՝ ածականական գործառույթներով (Гвишяни Н.Б. 1979: 114, 121, 145): Այլ հետազոտողներ նույնիսկ նշում են բառերի՝ ԿԿ-ներում նորանոր իմաստային երանգավորումներով հանդես գալու, դրանով իսկ՝ խոսքիմասային տարարժեքություններ դրսևորելու ունակության մասին, այն պարագայում, երբ պահպանելով հանդերձ նախնական շարահյուսական կառույցը, այդ բառերը հայտնվում են, այսպես ասած, «օտար» շարահյուսական միջավայրում (Тетияс В. Н., 1976: 260):

Իսկ Շ. Բալլին փոխակերպական այդ երևույթը (խոսքիմասային տարարժեքության դրսևորումը) քննարկում է ոչ միայն առանձին բառերի, այլև բառակապակցությունների նկատմամբ՝ այդպիսով ընդլայնելով լեզվական միավորների դիտարկման շրջանակը (Bally CH., 1950:305): Ֆ.Ա. Լիտվինը գտնում է, որ բառերի դարձվածային-պայմանական նշանակությունները կարող են դրսևորվել ոչ միայն դարձվածային հավաքածուի կամ փնջի տարբերակներում, այլև մինչև դարձվածքի ձևափոխություններում, որը լեզվաբանական գրականության մեջ կոչվում է «դարձվածքի դեֆորմացիա» (Литвин Ф.А., 2005: 83):

Այս հայեցակերպից քննելով Ջ. Ջոյսի «Դուբլինցիներ»-ի լեզուն, տեսնում ենք, որ այն պարզ է, գերակշռում են բառերի ուղղակի կամ անվանողական նշանակությունները, որոնք հաճախ հանդես են գալիս ՍԿ-ների տեսքով և չունեն որևէ այլաբանական նշանակություն, բացառությամբ որոշ դեպքերի, երբ տվյալ բառակապակցությունը կամ նախադասությունը «գործում» է մի այնպիսի լեզվական միջավայրում, որը խորհրդանշական է (թեև խորհրդանշական կարող է համարվել գրողի յուրաքանչյուր արտահայտությունը): Ամեն ինչ, ի

վերջո, կախված է գրողի հայեցողությունից, նպատակադրումից և համատեքստից:

Պետք է նկատի ունենալ, որ Ջ. Ջոյսի նկարագրության եղանակը նման է կինոժապավենի, որի վրա տարբեր դիրքերից ու տարբեր տեսածավալներից երևակվում են մարդիկ, գործողություններ, մարդկային վարքի դրսևորումներ: Գրողը կարծես դիտարկում է նրանց վարքը՝ ի ցույց դնելով նրանց տեսքն ու բնորոշ շարժումները (ասենք, «գլուխը քորեց», «մեղմորեն թեթեց գլուխը», «ձեռքը դրեց ծնոտին», «տենդորեն քրքջաց» և այլն)՝ կարծես հոգեախտորոշիչ ինչ-որ եզրակացություն անելու միտումով համակված: Ահա մի քանի բնորոշ օրինակներ «Կրկնակը» պատմվածքից, որտեղ առկա են թե՛ ԱԿ-ներ, թե՛ դարձվածային միավորներ (ԿԿ-ներ)։

The Bell rang furiously and when Miss Parker went to the tube, a furious voice called out in a piercing North of Ireland accent.

'Send Farrington here!'

Miss Parker returned to her machine, saying to a man who was writing at a desk.

'Mr. Alleyne wants you upstairs'

The man muttered 'Blast him!' under his breath and pushed back his chair to stand up. When he stood up he was tall and of great bulk.

He had a hanging face, dark wine-coloured, with fair eyebrows and moustache: his eyes bulged forward slightly and the whites of them were dirty. He lifted up the counter and, passing by the clients, went out of the office with a heavy step. (p. 61)

«Ձանգը մոլեգնորեն հնչեց, և երբ միսս Փարկերը վերցրեց լսափողը, մի կատաղի ծայն, հյուսիս-իռլանդական ականք ծակող արտասանությամբ, բղավեց.

-Ֆարինգտոնին ուղարկեք ինձ մոտ:

Միսս Փարկերը վերադառնալով իր գրամեքենայի մոտ, ասաց սեղանի ետևում նստած գրագրին.

-Միստր Օլեյնը Ձեզ վերև է կանչում:

Մարդը կիսածայն մրթմրեաց. «Թող կորչի» և աթոռը հտ հրեց, որ տեղից վեր կենա: Երբ ոտքի կանգնեց, նա բավական բարձրահասակ էր ու ամրակազմ: Դեմքն ուռած էր, մուգ-գինեգույն, հոնքերն ու բեղերը՝ շիկավուն, աչքերը փոքր-ինչ ոռուտ անոթած էին, իսկ սպիտակուցները՝ պղտոր: Նա բարձրացրեց սեղանի փեղկը և, անցնելով այցելուների կողքով, ծանր քալելով ոռուտ եկավ գրասենյակից»: (էջ 51-52):

Ինչպես տեսնում ենք՝ ընդօթյալները կամ համընկնում են (բնագիրը՝ թարգմանության հետ) կամ էլ՝ ոչ: Կարելի է ասել, որ համընկնում են կամ մոտավորապես են համընկնում հետևյալ ԱԿ-ները. rang furiously - մոլեգնորեն հնչեց, at a desk - սեղանի ետևում (անգլ. սեղանի մոտ), wants you upstairs - Ձեզ վերև է կան-

չում (անգլ.՝ քեզ է ուզում վերևում), pushed back - ետ հրեց, to stand up - վեր կենա, went out - դուրս եկավ:

Չեն համընկնում հետևյալ կապակցությունները. a furious voice – ը, որը հայերեն է թարգմանվել «ականջ ծակող» դարձվածքով և stood up, որը նույնպես հայերենում վերածվել է հարադրության՝ «ոտքի կանգնեց»: Վերջինս կարող է մեկ այլ համատեքստում հանդես գալ որպես դարձվածք (օրինակ՝ «ժողովուրդը ոտքի կանգնեց» = ապստամբեց):

Ուստի կարող ենք ասել, որ ավանդված, սկզբնատիպային դարձվածային միավորները, կախված համատեքստից, կարող են արտաքինապես (= բառային կազմով և շարահյուսական կառուցվածքով) նույնը մնալ, բայց չարտահայտել այլաբանական որևէ իմաստ (ինչպես որ բնագրի հայերեն թարգմանությունում է), և ընդհակառակը՝ կարող են հանդես գալ այլաբանական իմաստավորմամբ: Երրորդ ուղին, ինչպես և նշվեց վերևում, դարձվածային միավորի իմաստային փոխակերպումն է՝ կապված դարձվածքի ձևափոխության հետ («деформации и видоизм»):

Բերենք ԱԿ-ների և ԿԿ-ների այլ օրինակներ:

His life would be a hell to him, could he not keep his tongue in his cheek (p. 65)

«Կյանքն իսկական դժոխք կդառնա: Լեզուն չէ՞ր կարող իրեն քաշել»: (էջ 60)

Չամընկնում են (կամ համընկնում են մոտավորապես, քանի որ թարգմանության ժամանակ գրեթե բացառվում է նույնականությունը երկու լեզուների միջև).

hell to him - դժոխք կդառնա:

Մյուս հայերեն նախադասությունը՝ «Լեզուն չէ՞ր կարող իրեն քաշել», սոմատիկ2 դարձվածք է և մոտավորապես է համընկնում բնագրի հետ:

Պետք է այստեղ, նաև հետագա օրինակներում էլ նշել, որ ջոխյան հերոսների խուսումնադրվածքները կարծես արտաբերվում են մեխանիկորեն. դրանք, ըստ գրողի նպատակադրման, կոչված են արտահայտելու ոչ թե պատկերավորություն (ինչպիսին որ ենթադրվում է՝ դարձվածքների կիրառության պարագայում), այլ ճիշտ հակառակը՝ ցուցանելու անհոգիություն և տաղտկալի իմաստավորություն:

Ջոխը դարձվածքների կիրառությամբ կարծես ուզում է ասել, որ այդ իրականության մեջ մարդիկ ասույթներ, ասացվածքներ, դարձվածքներ կիրառող ձանձորալի եակներ են. չկա ոչ մի թարմություն կամ հոգևոր ելևէջ. ամեն ինչ ընթանում է սովորության տաղտկալի հունով, ամեն ինչ կրկնված է բազմիցս և վկայում է հոգևոր մեռածության մասին: Կարելի է ասել, որ դարձվածքների կիրառումն այս մտայնությամբ լրիվ չեզոքացնում է դարձվածքների պատկերավորության, հակիրճության և սրության մասին ընթերցողի պատկերացումները և

նրա առաջ բաց է անում դանթեական դժոխքին նմանվող մի անսիրտ, տանջալի իրականություն: Պատահական չէ, որ նրա հերոսն ասում է՝ «Կյանքն իսկական դժոխք կդառնա»: Նաև պատահական չէ, որ Ջ. Ջոյսին անվանել են 20-րդ դարի Ղանտե:

He went through the narrow alley of Temple Bar quickly, muttering to himself that they could all go to hell. (p. 65)

«Արագ-արագ քայլեց Թեմփլ-Բարի նեղ անցուղիով, քթի տակ փնթփնթալով և գրողի ծոցը ուղարկելով բոլորին» (էջ 61):

Ինչպես տեսնում ենք՝ անգլերենի դժոխքը (to hell) հայերենում դարձել է «գրողի ծոցը», որը ավելի է բնորոշ հայերենի դարձվածամտածողությամբ և հայերենի ԿԿ-ներից մեկն է: Իսկ բնագրի «muttering to himself» ԱԿ-ն հայերենում ավելի է սաստկացել՝ «քթի տակ փնթփնթալով» արտահայտությամբ, որը նույնպես ներուճակ է մի որևէ համապատասխան համատեքստում վերածվելու դարձվածքի, այսինքն՝ այլաբանական ԿԿ-յան:

Farrington looked at the company out of his heavy dirty eyes, smiling and at times drawing forth stray drops of liquor from his moustache with the aid of his lower lip (p. 66)

heavy dirty eyes - epithet

lower lip - attr.

«Իսկ Ֆարինգտոնը շրջապատողներին էր նայում իր ծանր, առոտ հայացքով, ժպտում և միաժամանակ ներքևի շուրթով ծծում բեղերը, որոնցից վիսկիի կաթիլներ էին ծորում»: (էջ 62)

Անգլերենում ընդգծյալը բառացիորեն նշանակում է «ծանր, պղտոր աչքեր», որը հայերենում թարգմանվել է «ծանր, աղոտ հայացք»։ Թե՛ անգլերեն, թե՛ հայերեն տարբերակները տվյալ համատեքստում ունեն փոխաբերական արժեք։ Թե՛ «աչք»-ով, թե՛ «հայացք»-ով կարող են կազմվել բազմապիսի սոմատիկ դարձվածքներ։ Այստեղ ուշադրավ է «ծանր» մակդիրը (բերականական՝ ձևաբանաշարահյուսական մակարդակում՝ ածականական որոշիչը)՝ զուգակցված աչքի կամ հայացքի հետ, որի հետևանքով բառակապակցությունը ձեռք է բերում դարձվածքի արժեք։

They were all beginning to feel mellow. (p. 67).

«Բոլորի կատարները տաքացել էին»: (էջ 63)

Բնագրային «beginning to feel mellow» կապակցությունը (բառացի՝ սկսել էին զգալ հարբածություն) հայերենում թարգմանվել է «կատարները տաքացել էին» դարձվածքով, որը պետք է ասել, լավ է արտահայտում շոտլանդական բարից հետո մեկ այլ սենյակում գինարբուքը շարունակող ընկերների հոգեվիճակը։ Սա ևս սոմատիկ դարձվածք է (կատարները = գլուխները = գազաթները):

Պետք է ասել, որ Ջոյսի տեքստերում՝ թե՛ «Դուրլիմինգներում», թե՛ «Ուլիսում», թե՛ «Ֆիննեգանի հոգեհացում», մեծ տեղ են գրավում հատկապես

1) սոմատիկ բնույթի դարձվածքները, ինչպես նաև 2)պատկերավոր համեմատությունները և 3)փոխաբերությունները: Բերենք մեկական օրինակ նույն «Counter-parts» («Կրկնակը») պատմվածքից.

1. He clapped his hands together in the air and his voice shook with fight (p. 69).

Ապա օրում հորադ գաղկեց ծեռքերը և ծայրը դողողոց վախից» (էջ 66):

2. The pallor of Weathers' complexion changed to peony. (p. 68).

«Ուեդերսի գունատ դեմքը պիոնի գույն ստացավ» (էջ 64):

3. His heart (was fell of) swelled with fury (p. 68):

«Սիրտը լեցուն էր կատաղությանը» (էջ 65):

Լեզվառճական նման միջոցների, ԱԿ-ների, ԿԿ-ների և հատկապես, սոմատիկ դարձվածքների ներկայությունը Ջ. Ջոյսի լեզվում պատահական չեն. դրանք հեղինակի բարոյագեղագիտական խաղացքների արտահայտություններն են, և որպես այդպիսիք՝ ունեն լեզվաբանաստեղծական ուրույն արժեք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ինչպես նշում են դարձվածքաբանները, դարձվածային միավորները առաջին հերթին կայուն են (թեև, ինչպես նշվում է, կարող են փոփոխվել՝ կապված հեղինակի մտայնության և երկի համատեքստային հնչողության ու այլ գործոնների հետ): Կայուն լինելով՝ դրանք նաև այլաբանական են: ԿԿ-ներին նկիրված աշխատությունները բազմաթիվ են, որոնցում ԿԿ-ները դիտարկվել են տարբեր տեսանկյուններից: Գեղարվեստական տեքստերում կիրառված ԿԿ-ների մասին ևս քիչ չի գրվել. բայց մեզ դեռ չեն հանդիպել Ջ. Ջոյսի արձակում (բնագրում և հայերեն բարգմանություններում) հանդիպող ԿԿ-ների մասին համապատասխան դիտարկումներ: Պետք է նշել, որ դրանք հիմնականում դարձվածային միավորներ են, որ Ջ. Ջոյսը կիրառել է գաղափարագեղագիտական ուրույն մպատակադրմամբ:

2. Սոմատիկ են կոչվում մարդու մարմնամասերի հետ կապված դարձվածքները, որոնք տարածված են թե՛ անգլերենում, թե՛ հայերենում: Նման դարձվածքների մասին լավագույն պատկերացում են տալիս դարձվածաբանական բառարանները: Տես, օրինակ, Գ. Ջ. Ղազարյանի «Մարմնի մասերի անվանումներով «հայերեն-ռուսերեն-անգլերեն դարձվածքների բառարան» - ր (Երևան, հեղինակային հրատ., 2010, 576 էջ):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խաչատրյան, Լ.Ս. Խոսքիմաստային տարարժեքությունը արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., ԳԱԱ «Գիտություն» հրատարակչ., 1996, 257 էջ:
2. Ղազարյան Գ.Ջ., Մարմնի մասերի անվանումներով հայերեն - ռուսերեն- անգլերեն դարձվածքների բառարան, Ե., Զեդ. հրատ., 2010, 576 էջ:
3. Гвишиани Н. Б. Полифункциональные слова в языке и речи, М, 1979.
4. Телия В.Н., Семантический аспект сочетаемости слов и фразеологическая сочетаемость //Сб. "Принципы и методы семантических исследований", М., 1976.
5. Bally Ch., Linguistique générale et linguistique française, Berne, 1950
6. Кунин А.В., Англо-русский фразеологический словарь, М. "Советская Энциклопедия", 1982.
7. Wood F.T., Hill R.L., Dictionary of English Colloquial Idioms, London, 1980.

Աղբյուրներ

1. Ջոյս Ջեյմս, Ղուրխնցիներ, Ե., «Սովետական գրող», 1978:
2. Ջոյս Ջեյմս, Ուլիս, Ե., 2011:
3. Джойс Джеймс, Дублинцы. Рассказы. Портрет художника в юности(Роман), М., "Знаменитая книга", 1993.
4. Joyce James, Dubliners, Introduction and Notes by LAURENCE DAVIES, Dartmouth. College, New Hampshire, 2001: